

Վահան Թեքեյան



... ի՞նչ մնաց,

կեսակէն ինձի ի՞նչ մնաց.

ի՞նչ որ ցուռի ուրիշին, ցարթորիւս՛կ, այն միայն...

Բանաստեղծ, հրապարակախոս, ուսուցիչ, հասարակական գործիչ Վահան Թեքեյանի ստեղծագործություններն իրենց ուրույն ու չքնաղ երանգներն ունեն հայ բանաստեղծության հարուստ աշխարհում: Նա Հայոց եղեռնից պատահաբար փրկված այն ստեղծագործողն է, ով բարձր պահեց ապագայի հավատը եւ իր երկերում արծարծեց կենսուրախության ու հերոսության գաղափարները:

Ծնվել է 1878թ. հունվարի 21-ին Կ.Պոլսի Օրթագյուղ թաղամասում: Սկզբնական կրթությունն ստացել է ծննդավայրում, եղել Ներսիսյան, Պերպերյան, Կեղրոնական վարժարանների սանը: 1896թ. որպես առեւտրական պաշտոնյա մեկնել է Եվրոպա, ապա հաստատվել Եգիպտոսում: Այստեղից անընդհատ աշխատակցել է արեւմտահայ պարբերականներին, իսկ 1905 թվականից ժամանակի հայ գրողներին համախմբել իր հիմնադրած «Շիրակ» պարբերականի շուրջը:

Համիդյան բռնակալության անկումից հետո Թեքեյանը «Շիրակը» տեղափոխել է Կ.Պոլիս, հաստատվել այստեղ, մասնակցել ազգային-հասարակական կյանքին: 1914թ. Թեքեյանը կրկին Եգիպտոսում էր, ինչը նրան հնարավորություն տվեց փրկվելու արյունահեղ կոտորածից: Գրական-մանկավարժական կյանքը ծննդավայրում անցկացնելու ձգտումը, սակայն, դարձյալ հանգիստ չէր տալիս նրան, եւ, վերադառնալով Պոլիս, նա սկսում է խմբագրել «Ժողովրդի ձայն» օրաթերթը:

Այնուհետեւ վարում է Կենտրոնական վարժարանի տնօրենի պաշտոնը: Քաղաքական կյանքն այնուամենայնիվ ստիպում է գրողին կրկին ապաստան գտնել Եգիպտոսում, ուր մինչեւ իր կյանքի վերջը խմբագրում է «Արեւ» օրաթերթը:

Վախճանվել է Կահիրեում 1945թ. ապրիլի 4-ին: Թեքեյանի աճյունը հանգչում է Կահիրեի հայկական գերեզմանատանը:

Թեքեյանը ոչ միայն չքնաղ բանաստեղծությունների ու սոնետների հեղինակ է, այլեւ գրել է պատմվածքներ գաղութահայ կյանքի ու ազգային-ազատագրական շարժումների մասին: Նա նաեւ ճանապարհորդական նոթերի, բազմաթեմա հոդվածների ու գրական արժեքավոր նամակների հեղինակ է: Նրա գրչի տակից դուրս եկած յուրաքանչյուր գործում միախառնված են բանաստեղծական երեւակայությունն ու փիլիսոփայող միտքը: Դրանց միջոցով էլ գրողը փորձել է ըմբռնել կյանքի գաղտնիքներն ու վեր հանել մարդկային հասարակության մեջ տեղ գտած անարդարությունները: Թեքեյանի երկերում քիչ չեն նաեւ հայ ժողովրդի պատմությունից եւ ավանդություններից քաղված գրույցների մշակումները:

Թեքեյանի գրական ու հասարակական գործունեության արժանիքների արդարացի գնահատականը սփյուռքի ամենակարեւոր մշակութային միությունը նրա անունով կոչելն էր: Թեքեյան մշակութային միությունը հիմնադրվել է 1947թ. Բեյրութում: Աշխարհի բազմաթիվ երկրներում ունեցած իր մասնաճյուղերով այն նպաստում է հայ մշակույթի տարածմանը սփյուռքում: